

2003

**МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ВОПРОСЫ ЭФФЕКТИВНОСТИ
ОЦЕНИВАНИЯ КОРПОРАТИВНОЙ СТРАТЕГИИ**

**V. O. ARAKELYAN
H. A. MARGARYAN
A. A. PAMBUKHCHYAN**

В статье обсуждаются проблемы раскрытия корпоративной стратегии в рыночной экономике и его значение в процессе финансово-промышленной деятельности.

**METHODOLOGICAL QUESTIONS ON THE EVALUATION
OF THE CORPORATIVE STRATEGY'S EFFECTIVENESS**

**V. H. ARAKELYAN
H. A. MARGARYAN
A. A. PAMBUKHCHYAN**

The article discusses the disclosure of issues of corporate strategy for financial-market economy and its importance in the company's financial-industrial activity analysis process.

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ
ՈՐՊԵՍ ՕԲՅԵԿՏԻՎ ԱՆՀՐԱՎՃԵՇՏՈՒԹՅՈՒՆ**

**Վ. Ս. ԴԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ**

Դայտնի է, որ տնտեսության կառավարման խնդիրը համարվում է արտադրության նախակիցների և ծառայություն նատուրող բոլոր նախակիցների գործողությունները միմյանց հետ այնպես կողորդինացնելը, որը կարող է նպաստել շուկայի և պետության փոխկապվածության այնպիսի իրավիճակի ձևավորմանը, որը կարող է երաշխավիրել տնտեսագիտության խնդիրների լուծմանը՝ ի՞նչ արտադրել, ե՞րբ, որքա՞ն և ու՞մ համար արտադրել տվյալ ժամանակահատվածում բնակչության և արտադրության պահանջների բավարարման համար, որոնք տնտեսության պետական կարգավորման տեսակետից ունեն կարևոր նշանակություն:

Դրան համաձայն հասարակական կյանքի ընդհանուր կազմակերպման ու կառավարման հիմնական դերակատարը եղել և շարունակում է մնալ պետությունը՝ իր գործառույթներով հանդերձ: Ի դեպքում պետության նախն տերմինը առաջին անգամ առաջադրվել է Ն. Մակինելլիի կողմից և դիտվել որպես քաղա-

քական իշխանության ինստիտուտ¹: Նախկինում այդ գործառույթներից հայտնի մտածողների կողմից գնահատվել է հատկապես արտաքին վտանգներից երկրի և բնակչության պաշտպանությունը, երկրի իրավական պաշտպանությունը, հասարակական կարգի պահպանության պահպումը, որոնք մինչև XX դարի 30-ական թվականները եղել են տիրապետող և դիտարկվել են որպես պետության հիմնական գործառույթները:

Չթերագնահատելով պետության նշված գործառույթների կարևորությունն ու անհրաժեշտությունը, հարկ ենք համարում նշել, որ նոր արտադրական տնտեսական հարաբերությունների աստիճանական զարգացումները, աշխատանքի հասարակական բաժանման փոփոխություններն ու դրանցով պայմանավորված ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը լուրջ նախադրյալներ ստեղծեցին նաև պետության տնտեսական, ֆինանսական, սոցիալական գործառույթների ձևավորման ու զարգացման համար: Անշուշտ այդ գործառույթները անմիջականորեն կապված են տվյալ երկրի տնտեսությանը բնորոշ առանձնահատկությունների, զարգացվածության նակարդակի հետ:

Այդ առանձնահատկություններից ելենով՝ պետության կողմից առաջադրվում են այնպիսի նպատակային խնդիրներ և խաղի կանոններ, որոնք համահունչ են երկրի, հասարակության սոցիալ-տնտեսական միասնական գործընթացի կառավարման հետ և կարող են նպաստել ինչպես ամբողջ բնակչության նորմալ կենսագործունեության նակարդակի բարձրացմանը, այնպես էլ տնտեսության կայունացմանը:

XX դարի 30-ական թվականներից գիտականորեն հիմնավորված է այն տեսական դրույթը, որ ժամանակակից շուկայական տնտեսությունը չի կարող նորմալ գործունեությամբ զարգանալ առանց պետական ակտիվ աջակցության ցուցաբերման²: Իրականում, եթե պետությունը աջակցություն չցուցաբերի հավաքագրված եկամուտների արդարացի բաշխմանը, չվարի խթանող հարկարյութետային քաղաքականություն, դրամավարկային և նաքսային խթանող քաղաքականություն, չնշակի հիմնավոր պետական լծակներ, ապա հասարակությունը կարող է իր վրա կրել այնպիսի նեգատիվ երևույթների ներգործությունը, որոնք կարող են հանգեցնել ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործմանը, չի կարող հաղթահարվել զանազան պատճառներով առաջացած կոնֆլիկտները³:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ ժամանակակից պայմաններում տնտեսագիտության ռազմավարության հիմնախնդիրներից մեկը համարվում է շուկայի և պետության միջև այնպիսի փոխկապվածության ձևավորումը, որը կարող է նպաստել ամբողջ տնտեսության կարգավորմանն ու նրա առանձին ոլորտների միջև ներդաշնակության պահպումանը: Դա անշուշտ ոչ միայն սահմանադրական պահանջ է, այլև զնահատվում է որպես օբյեկտիվ անհրաժեշտություն:

Վերջինս արտահայտվում է նրանում, որ տնտեսության իրական հատվածի և սոցիալական ոլորտի միջև պահանջվում է այնպիսի գործունեություն ծավալել:

¹ Государственное регулирование экономики. Под ред. Н. Н. Мысляевой, Н. П. Кононковой, М., изд. МГУ, 2010, стр. 10.

² Государственное регулирование экономики. Под ред. Н. Н. Мысляевой, Н. П. Кононковой, М., изд. МГУ, 2010, стр. 7.

³ Նույն տեղը:

որը կարող է երաշխավորել շուկայի և պետության համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որը լուրջ նախադրյալներ կստեղծի ինչպես շուկայական լծակների, այնպես էլ պետական կարգավորող լծակների միջև փոխհարաբերակցության կարգավորման համար:

Այս առումով հանրապետության անկախացումից հետո պետության տնտեսական դերի կարևորության աստիճանը էլ ավելի է բարձրացել, քանի որ վերջինս հանրավում է երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի կարգավորման վերջնական պատասխանատուն: Դա կարելի է հիմնավորել նրանով, որ պետության կողմից են մշակվում երկրի սոցիալ-տնտեսական ռազմավարական ծրագրերը, երկրի տնտեսական քաղաքականության, դրամավարկային, հարկաբյուջետային, մաքսային քաղաքականության լայնամասշտաբ ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրերը, որոնք շուկայի անկատարության պայմաններում արտացոլում են այն բոլոր պետական տնտեսական լծակները, որ անչափ կարևոր են տնտեսության պետական կարգավորման նպատակային հիմնախնդիրների լուծման համար:

Անշուշտ, շուկայական հարաբերությունների բովանդակության հետազոտությունը ցույց է տալիս, որ այն մի կողմից բնակչության պահանջմունքների և քողարկվող արտադրանքի նկատմամբ պահանջարկի ու առաջարկի ռազմավարություն է, որը կարևոր է արտադրության գործընթացի կարգավորման համար: Մյուս կողմից կատարվում է պահանջմունքների, ճաշակի ծևազորման և պահանջարկի վրա արտադրության ազդեցության հետազոտությունը, որը թույլ է տալիս կանխատեսել նոր պահանջմունքներ:

Ժամանակին նման մոտեցումների գնահատումը և իրականացման գործընթացները կարգավորվել են շուկայի միջոցով: Դա նշանակում է, որ շուկան օժուված է կարգավորման մեջ ուժով՝ ելնելով պահանջարկի և առաջարկի հարաբերակցության կարգավորման անհրաժեշտությունից: Ինչը ժամանակին հիմնավորվել է դասական տնտեսագիտության ներկայացուցիչներ Ա. Սմիթի, Դ. ՈՒկարդոյի, Կ. Մարքսի և ուրիշների կողմից՝ անտեսելով պետության ունեցած դերը, նրա նաև ակցությունը այդ կարևոր գործընթացին: Ինչպես նկատում ենք, ննան պայմաններում անտեսվում էր տնտեսությանը պետության կողմից աջակցության հնարավորությունը:

Սակայն, ինչպես հիշատակվեց, շուկայի անկատարության երևույթների առկայությունը հաճախ խոչընդոտներ է ստեղծում տնտեսությունում և շուկայում, որոնք էլ հանգեցնում են բացասական հետևանքների:

Ուստի շուկայի անկատարության երևույթները հաղթահարելու անհրաժեշտությունը գիտական մտածողների առջև նոր խնդիրներ առաջադրեցին, իսկ տնտեսության պետական կարգավորումը արդեն դարձավ օբյեկտիվ անհրաժեշտություն:

Դրա անհրաժեշտությունը պայմանավորված էր նրանով, որ տնտեսության մեջ բնականոն երևույթների առաջացումը, շուկայի անկատարության պատճառով նպատակային խնդրի լուծման խոչընդոտների առկայությունը հանգեցնում են բնակչության սոցիալական անհավասարությունների առաջացմանը, արտաքին միջավայրի ունեցած փոփոխությունների բացասական հետևանքների առաջացմանը:

Նման երևույթների կասեցման ու հաղբահարման անհրաժեշտությունից ելնելով ոչ միայն պատասխանատվություն են կրում տնտեսավարման գործընթացը իրականացնող սուբյեկտները, այլև պետությունը՝ ի դեմս կառավարության⁴:

Այսպիսով կարելի է հանգել այն հետևության, որ տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը ամենից առաջ հիմնավորվում է ինչպես շուկայական տնտեսության անհրաժեշտությամբ, այնպես էլ հասարակական բարիքների նկատմամբ պահանջարկի և առաջարկի բավարարման անհամապատասխանությամբ, պետական հատվածի և մասնավոր հատվածի միջև օպտիմալ հարաբերակցության սահմաննաման անհրաժեշտությամբ: Բացի դրանից, տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը բխում է նաև նրանից, որ ամբողջ տնտեսությունը դիտարկվում է որպես մի միասնական օրգանիզմ՝ իր առանձին ոլորտներով, ճյուղերով ու ենթաճյուղերով հանդերձ: Դրանց միջև ներդաշնակության ապահովման գործընթացը օբյեկտիվ անհրաժեշտություն է և պահանջվում է կիրառել համընդիանուր կարգավորման մեխանիզմներ՝ ելնելով առաջադրված միասնական խնդիրների լուծման անհրաժեշտությունից:

Այսպիսով, տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը կայանում է նաև նրանում, որ չնայած տնտեսավարող սուբյեկտները ազատ են իրենց գործառնությունների իրականացման հարցում, այնուամենայնիվ բոլոր սուբյեկտները մտնում են մինյանց նկատմամբ որոշակի հարաբերությունների մեջ, մասնավորապես.

- հարաբերություններ տնտեսավարող սուբյեկտների և պետության միջև՝ կապված հարկային, դրամավարկային, բյուջետային, բնապահպանական, ռազմական և այլ պարտավորությունների հետ,
- հարաբերություններ տնտեսավարող սուբյեկտների միջև՝ կապված ապրանքային ռեսուլտսների առջ ու վաճառքի, ծառայությունների մատուցման հետ,
- հարաբերություններ տնտեսավարող սուբյեկտների և հասարակության անդամների միջև՝ կապված աշխատուժի վարձակալման, ապրանքների ու ծառայությունների վաճառքի առանձնահատկությունների, ինչպես նաև խնայողությունների օգտագործման հետ:

Անշուշտ, նշված բոլոր հարաբերություններն էլ պահանջում են մակրոտնտեսական պետական, իրավական կարգավորում, որի շնորհիվ պետությունը միաժամանակ իր հովանավորության տակ է վերցնում տնտեսավարող սուբյեկտներին և նրանց աջակցություն ցուցաբերելու ճանապարհով պատրաստվում է վարել այնպիսի տնտեսական քաղաքականություն, որը կարող է լուրջ նախադրյալներ ստեղծել տնտեսավարող սուբյեկտների առջև որպատճակային խնդիրների լուծման համար: Դա իրականում պահանջում է տնտեսավարման իրականացման համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ, կանոնավորել երկրում քաղաքական, ֆինանսական, տնտեսական համագործակցված իրավիճակներ, որոնք կարևոր են ամբողջ տնտեսության և յուրաքանչյուր սուբյեկտի կայուն զարգացման համար:

Այդ նպատակով տնտեսության պետական կարգավորման առանցքային հիմ-

⁴ Государственное регулирование экономики. Под ред. Н. Н. Мыслеевой, Н. П. Кононковой, М., изд. МГУ, 2010, стр. 25.

նախնդիր է համարվում նաև տնտեսավարող սուբյեկտների միջև մրցակցության ապահովումը: Դրա համար պահանջվում է պետության կողմից սահմանել իրավական, տնտեսավարման և սոցիալական այնպիսի նորմեր, ծևավորել այնպիսի մեխանիզմներ, որոնք կնպաստեն տնտեսության պետական կարգավորմանը: Մեխանիզմներ ու պայմաններ, որոնք կարող են ապահովել ազատ մրցակցություն, խոչընդոտել մենաշնորհային և օլիգոպոլյային շուկաների ծևավորման գործընթացը:

Ելելով տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունից՝ պահանջվում է հասարակության համար ծևավորել այնպիսի սոցիալական պայմաններ, որոնք կնպաստեն տնտեսավարող սուբյեկտների միջև համանասնական կապերի ապահովմանը, նրանց համար սահմանել հարկերի և վարկերի գծով այնպիսի արտոնություններ, որոնց ներգործությամբ կմեղմացվեն տնտեսական ճգնաժամերի բացասական հետևանքները: Այդ նպատակով պահանջվում է կիրառել պետության կողմից անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ իրավիճակը կարգավորելու նպատակով:

Այսպիսով, տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը, մեր կարծիքով օբյեկտիվ անհրաժեշտություն է և պայմանավորված է հետևյալ փաստարկներով.

- պահանջվում է ապահովել շուկայական մեխանիզմների ազատ և արդյունավետ գործելու համար անհրաժեշտ պայմաններ ու նախադրյալներ,

- տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը հիմնավորելը կարևոր պայման է բացահայտել շուկայական համակարգերին բնորոշ բերությունները, որոնք հանգեցնում են որոշակի ձախողումների: Ուստի տնտեսական կյանքին պետական աջակցության օբյեկտիվ պահանջն է պարզել, թե որ ձախողումը պետք է կարգավորել և աշխատել կանխել հենց այդ ձախողված երևույթը,

- տնտեսական կյանքում կառուցվածքային տեղաշարժերի իրականացումը պահանջում է առաջնորդվել պետական կարգավորման տարրեր մեխանիզմների ներդրման առանձնահատկությունների գնահատման միջոցներից: Այսպես, օրինակ, ձեռնարկությունների խոշորացմամբ ֆերմերային տնտեսությունների ձևավորման գործընթացը պահանջում է պետականորեն մշակել այնպիսի կարգավորման մեխանիզմներ, որոնց ներդրումը կիրանի խոշորացված տնտեսությունների ու ֆերմերային տնտեսությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը,

- տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև տնտեսությունների պարբերաշրջանային զարգացումների հետևանքների հաղթահարման անհրաժեշտությամբ: Դա պայմանավորված է նրանով, որ համաշխարհային շուկայում բռնկվող ճգնաժամերը իրենց բացասական ազդեցությունն են ունենում բոլոր երկրների տնտեսությունների վրա: Հետևաբար, մակրոտնտեսական կայունության պահպանումը չի կարող կարգավորել շուկան: Հետևաբար դա նույնպես պահանջում է հակապարբերաշրջանային կարգավորում պետության կողմից:

Այս ամենից հետևում է, որ պետական կարգավորման անհրաժեշտությունը ամենից առաջ պայմանավորված է երկրի տնտեսական ու սոցիալական խնդիր-

Աերի լուծնան անհրաժեշտությամբ, որոնք միմյանց հետ փոխադարձաբար կապված են: Դրանցից, մեր կարծիքով, առավել կարևոր խնդիրներն են.

- տնտեսության պարբերաշրջանային իրավիճակի կարգավորումը,
- դրամաշրջանային կայունացումը,
- պահանջվում է խթանել ներճյուղային և միջնյուղային մրցակցությունը, որը, մեր կարծիքով, համարվում է նվազագույն ծախսումներով առավելագույն արդյունքների ստացման խթանման կարևոր գործոն,
- արտաքին առևտրային կապերի շարունակական զարգացման ապահովումը,
- տնտեսության կառուցվածքների տեղաշարժերի իրականացումը,
- երկրի ներքին շուկայում գների կայունացումը և գնաճի երևոյթների հաղթահարումը,
- բնության պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը:

Ի դեպ, նշված բոլոր հիմնական խնդիրները միմյանց հետ փոխկապակցված են, ուստի դրանց նպատակային լուծումները համարվում են պետության կողմից վարվող միասնական սոցիալ-տնտեսական քաղաքականության գիտականորեն վարումը, որը և համարվում է տնտեսության պետական կարգավորման բովանդակությունը, ինչի հիմքում ընկած են պետության դերի մասին տեսությունների հիմնական դրույթները:

ГОСУДАРСТВЕННОЕ РЕГУЛИРОВАНИЕ ЭКОНОМИКИ КАК ОБЪЕКТИВНАЯ НЕОБХОДИМОСТЬ

A. S. AРУТЮНЯН

Известно, что проблема экономического управления считается таким координацием предпринимательства и всех членов предоставляющих услуги, которое будет способствовать формированию такого сотрудничества государства и рынка, и которое будет способствовать решению вопросов экономики.

С 30-х годов XX века был научно обоснованы те теоретические тезисы, что современная рыночная экономика не может нормально развиваться без государственной помощи. Однако, если государство не будет развивать основыывающиеся рычаги государственного влияния, то общество может почувствовать на себе такие негативные явления, которые могут привести к неэффективному использованию ресурсов, в то же время не будут преодолеваться разные виды конфликтов.

Отсюда можно прийти к заключению, что в нынешних условиях одно из проблем экономической стратегии это формирование государственных и рыночных таких отношений, которые могут способствовать урегулированию всей экономики и сохранение гармонии отдельных ее сфер. Это, конечно, не только законодательное условие, а оценивается еще как объективная необходимость.

STATE MANAGEMENT OF THE ECONOMY AS OBJECTIVE NEED

H. S. HARUTYUNYAN

In the conditions of the market the main task of regulation and management of economy is such coordination of actions of all producers and members who provide services which will create effective coop-

eration of the state and the market which will promote the solution of questions of economy. After the 30th years of the twentieth century gradual development of the production, economic relations, changes of public distribution of work and the commodity-money relations, created serious preconditions for formation and development of financial and social functions of the state. In the first half of the XX century those theoretical theses were scientifically proved that the modern market economy can't normally develop without the state help without which society can feel on itself such negative phenomena which can lead to inefficient use of resources. Depending on requirements of prevention and overcoming of such phenomena responsibility bear not only subjects who carry out economic process, but also the state in the person of the government. Finally the state is responsible for regulation of a social and economic situation in the country. Shortcomings of the market create obstacles for the market and economy and consequently the solution of these problems created new tasks for thinkers, and state regulation of economy became objective need.

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՆ ՀՀ-ՈՒՄ

Ս. Ա. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու,
ԳՊՀ դասախոս

Միջազգային մասնագիտացման շնորհիվ տնտեսական աճի ապահովումը հանդիսանում է տնտեսագիտության թերևս ամենահիմնավորված պնդումներից մեկը: Այս պնդման տեսական հիմնավորումը մշակվել է միջազգային առևտիք բազմաթիվ տեսություններում՝ սկսած Աղամ Սմիթից: Իսկ 20-րդ դարի երկրորդ կեսից համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական գործոններից մեկը համարվում է միջազգային մասնագիտացման շնորհիվ համաշխարհային առևտրաշրջանառության ծավալների աճը:¹

Այլ երկրների համեմատ՝ ՀՀ-ում միջազգային մասնագիտացման մակարդակը զգալի ցածր է, և արտահանումը զգալի փոքր դեր ունի համախառն եկամուտների ձևավորման գործում: Մասնավորապես՝ արտահանում/ՇՆԱ ցուցանիշով ՀՀ-ն (2010թ.-ին 20.7%) զիջում է ինչպես ԱՊՀ, այնպես էլ զարգացող շատ երկրների, այն զգալի ցածր է Համաշխարհային բանկի կողմից երկրների, ըստ Եկամուտների մակարդակի դասակարգման, բոլոր խմբերի միջինից: Միջին ցածր եկամուտ ունեցող երկրների խմբում, որտեղ ընդգրկված է նաև ՀՀ-ն, այս ցուցանիշի ավելի ցածր մակարդակ ունեն միայն այնպիսի երկրներ (Պակիստան, Ռուսաստան, Սուլանա), որոնց մեկ շնչին ընկնող գնողունակության պարիստով հաշվարկված ՇՆԱ-ն ավելի քան 2.5 անգամ ցածր է ՀՀ նույն ցուցանիշից:² Մյուս

¹ *Joans, Ronald at al.*: "The positive theory of international trade" in Joans, Ronald at al.: "Handbook of international economics,", Volume I, 1984, First Edition, Elsevier Science Publishers, North-Holland, էջեր՝ 2-65.

² Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ օգտվելով World Bank: "World Development Indicators" տվյալների բազայից, էլ. հասցե՝ <http://data.worldbank.org/data-catalog/world-development-indicators>: